Հավելված
ՀՀ կառավարության 2015 թ.
մարտի 26-ի նիստի N 13
արձանագրային որոշման

ՍԵՌԻ ՀԱՏԿԱՆԻՇՈՎ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

հ/հ	**Միջոցառման անվանումը**	**Ակնկալվող արդյունք**	**Կատարողը**	**Համակատա-րողը**	**Ժամկետը**	**Ֆինանսա-կան ապա-հովումը**	**Հղումը**
1	**2**	**3**	**4**	**5**	**6**	**7**	**8**
1.	Ընտանեկան բռնության ենթարկված անձանց պաշտպանության, նրանց տրամադրվող ծառայությունների բարելավմանն ու այդ ծառայությունների առավել արդյունավետ կազմակերպմանն ուղղված միջոցառումների իրականացում:	Սեռի հատկանիշով բռնության կանխարգելում և պաշտպանություն:					ՀՀ կառավարության 2011թ. հունիսի 17-ի նիստի N23 արձանագրային որոշման 3-րդ և 4-րդ կետեր
	1.1 Մշակել և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի և այլ շահագրգիռ մարմինների համատեղ հրամանով հաստատել «Ընտանեկան բռնության ենթարկված անձանց ուղղորդման ուղեցույցը»:		ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	ՀԿ-ներ /համաձայնությամբ/	Դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	Օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ	
	1.2 Բժշկական կազմակերպությունների բուժանձնակազմի համար մշակել և նրանց տրամադրել աշխատակարգ, սեռի հատկանիշով բռնության նախանշանների և վաղ հայտնաբերման վերաբերյալ:		ՀՀ առողջապահության նախարարություն		Տարվա ընթացքում	Օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ	
	1.3 Կազմակերպել սեռի հատկանիշով բռնության կանխարգելման նպատակային ծրագրերով նախատեսված միջոցառումների		ՀՀ մարզպետարաններ, Երևանի քաղաքապետարան		Տարվա ընթացքում	Ֆինանսավորում չի պահանջվում	

	իրականցման մշտադիտարկման, գնահատման, հեռանկարային ծրագրերի նախանշման աշխատանքներ:		/համաձայնությամբ/				
	1.4 Իրականացնել ընտանեկան բռնության ենթարկված անձանց բացահայտման, ուղղորդման աշխատանքներ և կազմակերպել նրանց համապատասխան աջակցության տրամադրում:		ՀՀ մարզպետարաններ, Երևանի քաղաքապետարան /համաձայնությամբ/	ՀԿ-ներ /համաձայնությամբ/	Տարվա ընթացքում	Օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ	
2.	Տարբեր ոլորտների մասնագետների որակավորման. նրանց ընտանեկան բռնության վերաբերյալ գիտելիքների հաղորդմանն ուղղված միջոցառումների իրականացում:	Սեռի հատկանիշով բռնության վերաբերյալ գիտելիքների հաղորդմանն ուղղված միջոցառումների իրականացման միջոցով տարբեր ոլորտի մասնագետների որակավորման, իրազեկության բարձրացում:					
	2.1 Իրականացնել «Ընտանեկան բռնություն» թեմայով քա-ղաքացիական ծառայողների վերապատրաստման դասընթացներ ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի 2008թ. հուլիսի 8-ի N567-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակում:		ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն		Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե	
	2.2 Իրականացնել «Ընտանեկան բռնությունը և ընտանեկան բռնության ենթարկված անձանց նախնական նույնացման չափորոշիչների կիրառում» թեմայով վերապատրաստման դասընթացներ համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնների սոցիալական աշխատողների համար:		ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն		Տարվա ընթացքում	Օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ	
	2.3 Իրականացնել դասավանդողների վերապատրաստում՝ սեռի հատկանիշով բռնության ենթարկված անձանց առողջապահական ծառայությունների տրամադրման նպատակով, որին կհաջորդի շարունակական ուսուցումը:		ՀՀ առողջապահության նախարարություն		Տարվա ընթացքում	Օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ	

	2.4 Հանրակրթական դպրոցի ուսուցիչների նախաատեստացիոն վերապատրաստման դասընթացներում ներառել ընտանեկան բռնությանը վերաբերող թեմաներ, կկազմակերպվեն քննարկումներ:		ՀՀ կրթության և գիտության նախարարություն		Տարվա ընթացքում	Ֆինանսավորում չի պահանջվում	
	2.5 Հանրակրթական դպրոցի 8-11-րդ դասարաններում սովորողների շրջանում անցկացնել «Առողջ ապրելակերպ» ուսուցողական դասընթաց՝ առողջ ապրելակերպի և ընտանեկան կյանքի նախապատրաստման հիմունքների վերաբերյալ:		ՀՀ կրթության և գիտության նախարարություն		Տարվա ընթացքում	Ֆինանսավորում չի պահանջվում	
	2.6 Միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորողների շրջանում անցկացնել «Վերարտադրողական առողջության խնդիրները երիտասարդության շրջանում» դասընթաց՝ առողջ ապրելակերպի, սեռերի միջև փոխհարաբերությունների և ընտանեկան բռնությունների կանխարգելման խնդիրների վերաբերյալ:		ՀՀ կրթության և գիտության նախարարություն	ՀԿ-ներ /համաձայնությամբ/	Տարվա ընթացքում	Օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ	
	2.7 ՀՀ ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտի վերապատրաստող անձնակազմի և կրթության ոլորտի այլ մասնագետների համար իրականացնել իրազեկման աշխատանքներ՝ Հայաստանի Հանրապետությունում առկա սեռի հատկանիշով բռնության խնդիրների, դրանց բացահայտման ու կանխարգելման ուղղությամբ իրականացվող գործընթացների վերաբերյալ:		ՀՀ կրթության և գիտության նախարարություն		Տարվա ընթացքում	Օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ	
	2.8 Կազմակերպել վերապատրաստման դասընթացներ ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանության անչափահասների գործերով ծառայության աշխատակիցների համար:		ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանություն		Տարվա ընթացքում	Օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ	

3.	Հասարակությունում սեռի հատկանիշով բռնության երևույթի կանխարգելմանը, բռնության երևույթի հանդեպ անհանդուրժողականության միջավայրի ձևավորմանը, սեռի հատկանիշով բռնությանը նպաստող կարծրատիպերի վերացմանը և սեռի հատկանիշով բռնության մասին իրազեկման բարձրացմանը, տեղեկավական և մեթոդական աջակցությանն ուղղված միջոցառումների իրականացում:	Հասարակությունում սեռի հատկանիշով բռնության երևույթի կանխարգելում, բռնության երևույթի հանդեպ անհանդուրժողականությա ն միջավայրի ձևավորում:					
	3.1 Մշակել ընտանեկան բռնության դեմ պայքարի թեմաներով տեղեկատվական նյութեր, դրանք տարածել և տեղադրել ԶԼՄ-ներում, հեռարձակել ընտանեկան բռնության կանխարգելման վերաբերյալ թողարկումներ, ընտանեկան բռնությունը դատապարտող տեսահոլովակներ:		ՀՀ մարզպետարաններ, Երևանի քաղաքապետարան /համաձայնությամբ/		Տարվա ընթացքում	Օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ	
	3.2 Իրականացնել «Ընդդեմ բռ-նության ակտիվության 16-օրյակ» ամենամյա հանրապետական քարոզարշավ:		ՀՀ մարզպետարաններ, Երևանի քաղաքապետարան /համաձայնությամբ/	ՀԿ-ներ, /համաձայնությամբ/	Նոյեմբեր-դեկտեմբեր	Օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ	
	3.3 ՀՀ մարզերում և Երևան քաղաքում կազմակերպել սեռի հատկանիշով բռնության վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանն ուղղված միջոցառումներ, սեմինար-պարապմունքներ, կլոր-սեղան քննարկումներ, շրջիկ կոնֆերանսներ տարբեր ոլորտների մասնագետների մասնակցությամբ, ըստ թեմայի կտրամադրվեն տեղեկատվական նյութեր և կցուցադրվեն հոլովակներ:		ՀՀ մարզպետարաններ, Երևանի քաղաքապետարան /համաձայնությամբ/	ՀԿ-ներ /համաձայնությամբ	Տարվա ընթացքում	Օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ	
	3.4 Կազմակերպել հանդիպում-զրույցներ հանրակրթական դպրոցներում:		ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանություն	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	Տարվա ընթացքում	Ֆինանսավորում չի պահանջվում	
	3.5 Կազմակերպել. ա/ «Սեռի հատկանիշով բռնության		Երևանի քաղաքապետարան	Երևանի քաղաքապետ	Տարվա ընթացքում	Երևան քաղաքի	

	կանխարգելում», «Սեռի հատկանիշով բռնության դեմ պայքար» թեմաներով սեմինարներ: բ/ «Սեռի հատկանիշով բռնության հիմնախնդիրները և կանխարգելման մեխանիզմները» թեմայով կլոր-սեղան քննարկումներ, տրամադրել համապատասխան տեղեկատվական նյութեր՝ ընտանեկան բռնության ենթարկված անձանց պաշտպանությանն ուղղված գործողությունների վերաբերյալ: գ/ «Ընտանեկան բռնությունն իմ պատկերացմամբ» նկարների ցուցահանդես: դ/ Քննարկումներ և բանավեճեր աշակերտների շրջանում՝ «Սեռի հատկանիշով բռնություն» թեմայով:		/համաձայնությամբ/	արանի առողջապահական ընկերություններ, մշակութային կազմակերպություններ, կրթական հաստատություններ, ՀԿ-ներ /համաձայնու-թյամբ/		բյուջե	
4.	Պտղի սեռով պայմանավորված՝ հղիության արհեստական ընդհատումների կանխարգելմանն ուղղված միջոցառումների իրականացում:	Պտղի սեռով պայմանավորված՝ հղիության արհեստական ընդհատումների կանխարգելում:					
	4.1 Իրականացնել ուսումնասիրություն՝ պտղի սեռով պայմանավորված՝ հղիության արհեստական ընդհատումների կանխարգելմանն ուղղված Հայաստանի Հանրապետությունում իրականացվող քաղաքականության վերաբերյալ:		ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ՀՀ առողջապահության նախարարություն	«Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» ՀԿ /համաձայնությամբ/	Տարվա ընթացքում	Օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ	
	4.2 Շահագրգիռ գերատեսչությունների, հասարակական և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների և փորձագետների մասնակցությամբ իրականացնել պտղի սեռով պայմանավորված՝ հղիության արհեստական ընդհատումների կանխարգելման վերաբերյալ 3 կլոր-սեղան քննարկում և մշակել քաղաքականության		ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ՀՀ առողջապահության նախարարություն	«Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» ՀԿ /համաձայնությամբ/	Տարվա ընթացքում	Օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ	

	առաջարկությունների համառոտագրեր:						
	4.3 Նախապատրաստել և ինտերնետում տեղադրել պտղի սեռով պայմանավորված՝ հղիության արհեստական ընդհատումների կանխարգելմանն ուղղված 2 տեսահոլովակ՝ Հայաստանի Հանրապետությունում իրականացվող քաղաքականության վերաբերյալ:		ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ՀՀ առողջապահության նախարարություն	«Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» ՀԿ /համաձայնությամբ/	Տարվա ընթացքում	Օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ	
	4.4 Մարզերում պտղի սեռով պայմանավորված՝ հղիության արհեստական ընդհատումների կանխարգելմանն ուղղված քարոզչական աշխատանքների իրականացման նպատակով. ա/ յուրաքանչյուր մարզում ստեղծել *խորհրդատվական* աշխատանքային խումբ, բ/ մշակել քարոզչական գործիքներ՝ հաշվի առնելով տեղական առանձնահատկությունները, գ/ կազմակերպել մարզային *խորհրդատվական* աշխատանքային խմբերի փորձի փոխանակման մեկ հանդիպում, դ/ 25 համայնքներում ստեղծել և վերապատրաստել համայնքային ակտիվ խմբեր, ե/ կազմակերպել 100 հանդիպում համայնքների բնակիչների հետ, զ/ պատրաստել սոցիալական գովազդի մեկ տեսահոլովակ, է/ մշակել, տպագրել և տարածել տեղեկատվական, կրթական և հաղորդակցության նյութեր, ը/ պատրաստել և կենտրոնական ու մարզային հեռուստա-ռադիոընկերությունների միջոցով հեռարձակել 16 հաղորդում, թ/ կազմակերպել քննարկումներ սոցիալական ցանցերում:		ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ՀՀ առողջապահության նախարարություն	«Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» ՀԿ /համաձայնությամբ/	Տարվա ընթացքում	Օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ	
	4.5 Ծննդօգնության հիվանդանոցային ծառայություններ մատուցող հաստատություններում հղիներին նախածննդյան		ՀՀ առողջապահության նախարարություն	«Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» ՀԿ	Տարվա ընթացքում	Օրենքով չարգելված ֆինանսավորման	

	խորհրդատվություն տրամադրող բուժ աշխատողների համար կազմակերպել սեմինարներ՝ սեռի որոշման տեխնոլոգիաների կիրառման էթիկական խնդիրների վերաբերյալ:			/համաձայնությամբ/		աղբյուրներ	
	4.6 Իրականցնել կանանց վերարտադրողական առողջության կանխարգելման և սեռով պայմանավորված՝ հղիության արհեստական ընդհատման կանխարգելմանն ուղղված իրազեկման աշխատանքեր գյուղական բժշկական ամբուլատորիաների բուժ աշխատողների միջոցով:		ՀՀ մարզպետարաններ	Գյուղական բժշկական ամբուլատորիաներ /համաձայնությամբ/	Տարվա ընթացքում	Օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ	